ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 37

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

27.04.2019թ. ք. Իջևան

Նիստին ներկա էր գիտական խորհրդի 35 անդամներից 26-ը:

Նիստը վարում էր գիտական խորհրդի նախագահ Ա. Վ. Ցուցուլյանը, նիստի քարտուղարն էր Մ. Ս. Աթոյանը:

Գիտական խորհրդի նախագահ Ա. Ցուցուլյանը բացելով գիտական խորհրդի նիստը հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. 2019-2020 ուստարվա ԵՊՀ ԻՄ-ի բակալավրիատի ուսման վարձավճարների չափերի քննարկում:

   /Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի գլխավոր հաշվապահ Մ. Մխիթարյան /

2. ԵՊՀ ԻՄ-ի 2019-2020 ուսումնական տարում առկա ուսուցմամբ մագիստրատուրայի ընդունելություն կազմակերպելու մասին:

   /Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն Ա. Վ. Ցուցուլյան/

3. Հաղորդում ԵՊՀ ԻՄ-ի սովորողների պրակտիկայի կազմակերպման գործընթացի մասին:

   /Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի ՄԿՊԿ բաժնի վարիչ Լ. Բեգինյան/

4. Ընթացիկ հարցեր:

4.1 ԵՊՀ ԻՄ-ի հեռակա ուսուցման բաժնի կանոնադրության հաստատում /նոր խմբագրությամբ/:

4.2 ԵՊՀ ԻՄ-ի ուսումնամեթոդական վարչության կանոնադրության հաստատում /նոր խմբագրությամբ/:

4.3 ԵՊՀ ԻՄ-ի ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգի հաստատում: /նոր խմբագրությամբ/:

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

<u>Օրակարգի առաջին</u>՝ «2019-2020 ուստարվա ԵՊՀ ԻՄ-ի բակալավրիատի ուսման վարձավճարների չափերի քննարկում» հարցի կապակցությամբ լսեցին ԵՊՀ ԻՄ-ի գլխավոր հաշվապահ Մ. Մխիթարյանի հաղորդումը:

Նա նշեց, որ իր կողմից կատարվել է համաեմատական վերլուծություն ՀՀ այլ բուհերում գործող վարձավճարների գործող չափերի հետ, և կարելի է փաստել, որ ԵՊՀ ԻՄ-ում առկա վարձավճարները միջին չափի են: Մասնավորապես ուսման վարձերը ՀՀ մարզերում գործող բուհերում համապատասխան մասնագիտությունների համար հետևյալն են.

1. Ինֆորմատիկա –ՀՀ ազգային Պոլիտեխ. համալսարան - 504,0հազար դրամ
2. ՏՄՄ – Վանաձորի պետական համալսարան -400,0 հազար դրամ
   Գավառի պետական համալսարան - 330,0 հազար դրամ
   Շիրակի պետական համալսարան - 300,0 հազար դրամ
3. Հոգեբանություն – Վանաձորի պետական համալսարան -350,0 հազար դրամ
   Շիրակի պետական համալսարան - 250,0 հազար դրամ
4. Դիզայն –Շիրակի պետական համալսարան - 350,0 հազար դրամ
   Հայաստանի գեղարվեստի ակադեմիա - 630,0 հազար դրամ
5. Կիրառական արվեստ – Հայաստանի գեղարվեստի ակադեմիա- 550,0 հազար դրամ

6. Ֆինանսներ - Շիրակի պետական համալսարան - 350,0 հազար դրամ
Վանաձորի պետական համալսարան- 360,0 հազար դրամ
Գավառի պետական համալսարան- 410,0 հազար դրամ
7. Զբոսաշրջություն - Գավառի պետական համալսարան- 320,0 հազար դրամ
Վանաձորի պետական համալսարան- 360,0 հազար դրամ
8. Անգլերեն լեզու և գրականություն - Շիրակի պետական համալսարան - 350,0 հազար դրամ
Վանաձորի պետական համալսարան- 300,0 հազար դրամ
9. Պատմություն - Վանաձորի պետական համալսարան - 350,0 հազար դրամ
Շիրակի պետական համալսարան - 350,0 հազար դրամ
Գորիսի մասնաճյուղ - 300,0 հազար դրամ
10. Ֆրանսերեն լեզու և գրակ. - Բրյուսովի անվան լեզվահասարակագիտ. համալսարան - 400,0 հազար դրամ
11. Հայոց լեզու և գրականություն՝
Շիրակի պետական համալսարան - 300,0 հազար դրամ
Վանաձորի պետական համալսարան - 350,0 հազար դրամ:

ԵՊՀ ԻՄ-ում առկա ուսուցման բակալավրիատի 2019թ. վարձավճարները ներկայացված են հավելված 1-ում, իսկ հավելված 2-ում ներկայացված են ԵՊՀ –ի և ԵՊՀ ԻՄ-ի վարձավճարները մեկ աղուսյակում՝ ակնառու համեմատության համար:

Արտահայտվեցին – ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար Ա. Ցուցուլյանը, ՈՒԻՄՎ պետ Ա.Ց. Դավթյանը, Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար(Ժ/Պ) Դավիթ Թինոյանը, Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչի Ժ/Պ Լևոն Սարգսյանը, Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչի Ժ/Պ Գուրգեն Հովհաննիսյանը, ՀՈՒԲ վարիչ Մարատ Զուրաբյանը, տնօրենի խորհրդական Անուշավան Մակարյանը:

Մասնավորապես **Լ. Սարգսյանը** նշեց, որ տարրական մանկավարժություն կրթական ծրագրի ուսման վարձը անհրաժեշտ է բարձրացնել առնվազն մինչը 400 հազար դրամ, այս կրթական ծրագիրը իրականացնելու համար մասնաճյուղից շատ ռեսուրսներ են պահանջվում, իսկ Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանը այս տարի 100 հազար դրամով բարձրավրել է այս կրթական ծրագրի ուսման վճարը:

Ա. Դավթյանը նշեց, որ ՈՒՄՎ-ի կողմից կատարված վերլուծությունները ցույց են տալիս, որ ՏՄՄ մասնագիտությամբ սովորում են հիմնականում հասարակության ոչ վճարունակ խավը:

Դ. Թինոյանը նշեց, որ ՎՊՀ-ի վարձավճարները ավելի բարձր են քան ԵՊՀ ԻՄ-ում համապատասխան վարձավճարները, չնայած այն հանգամանքին, որ ԵՊՀ ԻՄ-ը տալիս է ավելի որակյալ կրթություն:

Մ. Զուրաբյանը նշեց, որ մեր տարածաշրջանի բնակչությունը համեմատաբար վճարունակ չէ, և եղած ուսման վարձերն էլ դժվարությամբ են հավաքվում, և նշեց, որ Ռուսաց լեզու և գրականություն մասնագիտության համար 380 հազար դրամը բարձր է ԵՊՀ ԻՄ-ի համար:

Ա. Մակարյանը և Գ. Հովհաննիսյանը նշեցին, որ չնայած դժվար է հաշվարկել տվյալ մասնագիտությամբ բազմագործոն գնագոյացումը, սակայն պետք է քննարկում լինի կոնկրետ հաշվարկներից հետո:

Ա. Ցուցուլյանը նշեց, որ անհրաժեշտ է ստեղծել մասնագիտական հանձնաժողով ԵՊՀ ԻՄ-ում ուսման վարձավճարների գնագոյացումը ուսումնասիրելու և կոնկրետ առաջարկ ներկայացնելու համար, իսկ մինչ այդ ԵՊՀ ԻՄ-ի գլխավոր հաշվապահը առաջիկա գիտական խորհրդում իր հաշվետվության մեջ կներկայացնի թե յուրաքանչյուր կրթական ծրագրի համար մասնաճյուղը որքան գումար է ծախսում:

Ա. Ցուցուլյանը նշեց, նաև, որ պետք է աշխատենք այլ ֆինանսական միջոցներ ներգրավել ԵՊՀ ԻՄ, մասնավորապես՝ դրամաշնորհներ, նվիրատվություններ, մատուցել տարբեր տեսակի կրթական վճարովի այլ ծառայություններ, խորհրդատվություններ, վերապատրաստումներ և այլն, նա նշեց, նաև, որ ԵՊՀ-ն այս տարի ուսման վարձավճարների բարձրացում չի արել:

Որոշում 37/1

Ընդունել ի գիտություն:

***<u>Օրակարգի երկրորդ</u>*՝** «ԵՊՀ ԻՄ-ի 2019-2020 ուսումնական տարում առկա ուսուցմամբ մագիստրատուրայի ընդունելություն կազմակերպելու մասին›› հարցի կապակցությամբ լսեցին ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար Ա. Ցուցուլյանին: Նա նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ը կարող է իրականացնել մագիստրոսական կրթական ծրագիր միայն կիրառական արվեստ մասնագիտությամբ, եթե լինեն բավարար քանակով դիմորդներ:

Արտահայտվեցին – Կիրառական արվեստի ֆակուլտետի դեպանի ժամանակավոր պաշտոնակատար **Ա. Մարգարյանիը:** Նա նշեց, որ այս պահի դրությամբ ցանկություն հայտնել են մագիստրատուրայում սովորել ընդամենը 2 /երկու/ հոգի, որը ըստ էության բավարար չէ ընդունելություն կազմակերպելու համար և առաջարկեց մագիստրատուրայում ընդունելություն չիրականացնել:

Բաց քվեարկությամբ՝ 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշեցին

Որոշում 37/2

ԵՊՀ ԻՄ-ում 2019-2020 ուսումնական տարում առկա ուսուցմամբ մագիստրատուրայի ընդունելություն չկազմակերպել:

<u>Օրակարգի երրորդ՝</u> «Հաղորդում ԵՊՀ ԻՄ-ի սովորողների պրակտիկայի կազմակերպման գործընթացի մասին» հարցի կապակցությամբ լսեցին ԵՊՀ ԻՄ-ի **ՄԿՊԿ բաժնի վարիչ Լ. Բեգինյանի** հաղորդումը: Նա նշեց, որ պրակտիկայի մասին ամբողջական հաշվետվությունը կներառվի ՈՒՄՎ-ի հաշվետվության մեջ, իսկ ընթացքի մասին կարելի է ասել, որ ուսանողները հիմնականում գոհ են իրականացումից, բաժինը ամբողջովին տիրապետում է իրավիճակին, տեղյակ է խնդիրներին և միջոցներ է ձեռնարկում արդյունավետության բարձացման համար: Լ. Բեգինյանի հաղորդումը ամբողջությամբ տես հավելված 3-ում:

Արտահայտվեցին – Ա. Ցուցուլյանը, Մ. Զուրաբյանը, Մ. Աթոյանը, ուսանողներ Շ. Գասպարյանը, Լ. Մադաթյանը, Կ. Պողոսյանը և այլոք: Մասնավորապես ուսանողների կողմից նշվեց, որ արտադրական պրակտիկայի ժամերը անհրաժեշտ է կրկնապատկել, և անհրաժեշտ պրակտիկաները անցկացնել արհեստավարժ մասնագետների մոտ:

Բաց քվեարկությամբ՝ 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշեցին

Որոշում 37/3

ԵՊՀ ԻՄ-ի սովորողների պրակտիկայի կազմակերպման գործընթացը գնահատել բավարար:

<u>Ընթացիկ հարցեր:</u>

4.1 Լսեցին- «ԵՊՀ ԻՄ-ի հեռակա ուսուցման բաժնի կանոնադրության հաստատում /նոր խմբագրությամբ/» հարցի վերաբերյալ:

Բաց քվեարկությամբ՝ 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշեցին

Որոշում 37/4

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ԵՊՀ ԻՄ-ի հեռակա ուսուցման բաժնի կանոնադրությունը/նոր խմբագրությամբ/՝ համաձայն հավելված 4-ի:
2. Ուժը կորցրած ճանաչել ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի 2012թ.-ի նոյեմբերի 10-ի թիվ 5 նիստում հաստատված ԵՊՀ ԻՄ-ի հեռակա ուսուցման բաժնի կանոնադրությունը:

4.2. Լսեցին «ԵՊՀ ԻՄ-ի ուսումնամեթոդական վարչության կանոնադրության հաստատում /նոր խմբագրությամբ/›› հարցի վերաբերյալ::

Բաց քվեարկությամբ՝ 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշեցին

Որոշում 37/5

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ԵՊՀ ԻՄ-ի ուսումնամեթոդական վարչության կանոնադրությունը /նոր խմբագրությամբ/՝ համաձայն հավելված 5-ի:
2. Ուժը կորցրած ճանաչել ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի 2013թ.-ի դեկտեմբերի 27-ի նիստում հաստատված Ուսումնամեթոդական վարչության կանոնադրությունը:

4.3. Լսեցին «ԵՊՀ ԻՄ-ի ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգի հաստատում: /նոր խմբագրությամբ/» հարցի վերաբերյալ:

Բաց քվեարկությամբ՝ 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշեցին

Որոշում 37/6

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ԵՊՀ ԻՄ-ի ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգը /նոր խմբագրությամբ/՝ համաձայն հավելված 6-ի:
2. Ուժը կորցրած ճանաչել ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի 2016թ.-ի մայիսի 27-ի թիվ 16 նիստում հաստատված ԵՊՀ ԻՄ-ի ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգը:

Գիտական խորհրդի նախագահ_____ Ա. Վ. Ցուցուլյան

Գիտքարտուղար_____Մ. Ս. Աթոյան